ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2025 թվականի N 47-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1420-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության նպատակով՝ ըստ մասնագիտությունների ու տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության իրականացման կարգը և այդ վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնելու ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1420-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) վերնագիրը «ՁԵՎԵՐԸ» բառից հետո լրացնել «, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ» բառերով.

2) նախաբանը «4-րդ մասը,» բառերից հետո լրացնել «27.1-ին հոդվածի 1-ին մասը,» բառերով.

3) 1-ին կետում՝

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի չափերի, ինչպես նաև պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերից վճարված վարձատրության չափերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու, ինչպես նաև ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության ու պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծությունների արդյունքում սույն որոշման NN 1 և 3 հավելվածներով սահմանված ցուցանիշները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում ինքնաշխատ եղանակով հաշվարկելու նպատակով աշխատավարձի և պարգևատրման ֆոնդերից վճարվող վարձատրության տեսակների պայմանանիշերի ցանկը հաստատելու ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով՝

«3) պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծության կարգը՝ համաձայն N 3 հավելվածի։».

4) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի

նախագահին, անկախ պետական մարմինների և ինքնավար մարմինների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, քննչական մարմինների ղեկավարներին ապահովել տվյալ տարվա համար պետական մարմնին հատկացված աշխատավարձի ֆոնդի ցուցանիշների (ներառյալ թափուր պաշտոնների) վերաբերյալ տեղեկատվությունը, պետական բյուջեում վերաբաշխում կատարելու դեպքում այդ ցուցանիշների փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փորձագետներին, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց յուրաքանչյուր ամիս վճարված վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը հաշվապահական հաշվառման ծրագրերից արտահանելու և հաջորդ ամսվա 1-ից մինչև 20-ը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ ներբեռնելու գործընթացը, որը չի ներառում սույն որոշման 2.1-ին կետով նախատեսված անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, արտաքին հետախուզության, պետական պահպանության ծառայություններում պետական պաշտոն, պետական ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող զինծառայողներին և ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողներին վճարված վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով՝

«2.1. Սահմանել, որ դիվանագետների (դիվանագիտական և դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց), Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող աշխատողների վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը (բացառությամբ աշխատավարձի ֆոնդի միջոցների վերաբերյալ տեղեկատվության) մինչև

հաջորդ ամսվա 20-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին է փոխանցվում «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:».

6) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով՝

«3) սույն որոշման N 2 հավելվածի N 1 ձևի 2-15-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունն աղյուսակում ինքնաշխատ եղանակով լրացվում է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում առկա տվյալների հիման վրա, իսկ 16-29-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը՝ ինքնաշխատ եղանակով լրացվում է սույն որոշման 2-րդ կետով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ ներբեռնվող տվյալների հիման վրա.

4) սույն որոշման N 2 հավելվածի N 1 ձևով նախատեսված տեղեկատվությունը համապատասխան մարմինները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ են ներբեռնում մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի գործարկումը.

5) սույն որոշման N 2 հավելվածի N 1 ձևով նախատեսված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը հասանելի է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:».

7) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության նպատակով յուրաքանչյուր տարի մինչև հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել զեկույց՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության, ինչպես նաև պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծության

արդյունքների ամփոփմամբ և զեկույցը հրապարակել քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում: Զեկույցում ներկայացված՝ բազային աշխատավարձի և (կամ) գործակիցների փոփոխությանը վերաբերող առաջարկությունները քննարկվում են պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի նախապատրաստման ժամանակ:».

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետով՝

«7.1. Առաջարկել պետական մարմիններում հաշվապահական հաշվառման ծրագրեր սպասարկող ընկերությունների ղեկավարներին հաշվապահական հաշվառման ծրագրերում վարձատրության տեսակների կոդավորումն ապահովել սույն որոշման N 2 հավելվածի N 3 ձևով հաստատված պայմանանիշերի համաձայն:».

9) N 1 հավելվածում՝

ա. 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության անհրաժեշտությունը գնահատելու, ինչպես նաև դրանց չափերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) յուրաքանչյուր տարի իրականացնում է՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծություն:

2. Լիազոր մարմինն ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման 2-րդ կետով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ ներբեռնվող տեղեկատվության հիման վրա վերլուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց և պետական բոլոր ծառայողների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի նախարարություններում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, պետական

պահպանության, արտաքին հետախուզության ծառայություններում պետական պաշտոն, զինվորական ծառայության պաշտոն և արտաքին հետախուզության ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց) աշխատավարձերի չափերը, ինչպես նաև նրանց վարձատրությանն ուղղված այլ միջոցները:»,

բ. 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-4.9-րդ ենթակետերով՝

«4.1) պետական ծառայողների միջին աշխատավարձը՝ ըստ սեռի.

4.2) պետական պաշտոն զբաղեցնող անձանց միջին աշխատավարձը՝ ըստ սեռի.

4.3) աշխատավարձի միջնարժեքը (մեդիանը) պետական ծառայության համակարգում.

4.4) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց թիվը՝ ըստ պաշտոնների տեսակների.

4.5) պետական թափուր պաշտոնների և պետական ծառայության թափուր պաշտոնների թիվը.

4.6) պետական ծառայողների թիվը պաշտոնների խմբերում՝ ըստ սեռի.

4.7) պետական ծառայողների միջին աշխատավարձը՝ ըստ տարիքային խմբերի.

4.8) ամենաբարձր և ամենացածր աշխատավարձ ստացող պետական ծառայողների աշխատավարձերի չափերի հարաբերակցությունը՝ ըստ պաշտոնների խմբերի.

4.9) նախորդ տարվա արդյունքներով կատարողականի հիման վրա պարգևատրված պետական ծառայողների թիվը՝ ըստ պաշտոնների խմբերի:»,

դ. 4-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով՝

«4.1. Սույն կարգի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետով նախատեսված աշխատավարձի միջնարժեքը (մեդիանը) փոքրից մեծ հաջորդականությամբ դասավորված աշխատավարձերի տվյալների բազմության մեջտեղի արժեքն է, իսկ եթե այդ արժեքները երկուսն են, ապա դրանց միջինն է:»,

զ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.2-րդ կետով՝

«4.2. Դիտարկվող ժամանակահատվածում պետական ծառայողների հոսունության մակարդակը լիազոր մարմինը վերլուծում և գնահատում է՝ հիմք ընդունելով քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում պետական ծառայողների (բացառությամբ զինծառայողների, արտաքին հետախուզության ծառայության, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների)՝ անձնական դիմումի համաձայն պաշտոնից ազատման հիմքերի վերաբերյալ առկա տվյալները, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Հոսունություն} = \frac{\text{անձնական դիմումի համաձայն ազատված պետական ծառայողների թիվ}}{\text{պետական ծառայողների միջին թիվ}} * 100\ \%:»,$$

է. 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Լիազոր մարմինն անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից ստացված տվյալների հիման վրա իրականացնում է ընթացիկ տարվան նախորդող տարում ոչ պետական հատվածի կազմակերպություններում (Երևան քաղաքում և մարզերում) աշխատողների աշխատավարձերի չափերի վերլուծություն՝ ըստ աշխատողների մասնագիտության և աշխատաժամանակի ռեժիմի:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված վերլուծության արդյունքների հիման վրա լիազոր մարմինը հաշվարկում է միջին աշխատավարձի չափերի, աշխատավարձի միջնարժեքների տարբերությունները պետական ծառայության համակարգում և ոչ պետական հատվածում, այդ թվում նաև՝ ստորին դեցիլի (ցածր աշխատավարձ ստացողների 10 տոկոսի) և վերին դեցիլի (բարձր աշխատավարձ ստացողների 10 տոկոսի) միջին աշխատավարձերի, դրանց միջնարժեքների տարբերությունները:»,

ը. 8-րդ կետի «կառավարություն է ներկայացնում» բառերը փոխարինել «վարչապետի աշխատակազմ է ներկայացնում զեկույց, որը ներառում է» բառերով.

10) N 2 հավելվածում՝

ա. N 1 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի,

բ. N 2 ձևն ուժը կորցրած ճանաչել,

գ. լրացնել N 3 ձևով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության, ինչպես նաև պետական մարմիններին հատկացված աշխատավարձի, պարգևատրման ֆոնդերի վերլուծության վերաբերյալ զեկույցը լիազոր մարմինն առաջին անգամ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում մինչև 2026 թվականի հունիսի 1-ը 2025 թվականի արդյունքների հիման վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ